

**ՊԱՏՄԱ - ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԲՆՆՈՒԹՅՈՒՆ «ԳԱՂՏՆԻՔ ՂԱՐԱՔԱՂԻ»
ՈՒՄՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՁ**

Ջ. Ա. Բալայան

Հայ գրականության և պարբերական մամուլի պատմությունը փաստել են բանավիճային ընդհանրությունները, որոնք գրավել են գրական, քննադատական, հրատարակատեսական որոշ շրջանակների ուշադրությունը:

1886թ. Սանկտ Պետերբուրգում, Մակաչ փարդապետ Բարխուդարյանի թարգմանությամբ (գրաբերիչ աշխարհաբար), Առաքել աղա Մատուրյանի մեկնատությամբ հրատարակվել է Ասորես Բեկնագարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական ուսումնասիրությունը:

Ուսումնասիրության շուրջ պարբերական մամուլում լույս են տեսել դրական և բացասական կերպերներ, գնահատումներ, գրախոսություններ, հրատարակվել են ուսումնասիրություններ (Դաֆթի, «Գաղտնիք Ղարաբաղի», Լեռ, «ՎԷ՞պ թե պատմություն», Մ. Բախուդարյան, «Քննադատություն քննադատությանը»): Վերջնական արդյունքում աշխատությունը ամբողջությամբ արժեքազրկվել և մերժվել է:

Սակայն մանրակրկիտ քննությամբ մենք եկել ենք այն եզրահանգմանը, որ «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական ուսումնասիրությունը պարունակում է բազմաթիվ պատմական զրուցաբեկներ, մեկնություններ, արցախահայության պայքարի բազմապիսի դրսևորումներ՝ կապված XVIII դարի պարսկական արշավանքների, ռուս-հայկական-արցախական հետաքրքիր արաբերությունների, ապա՝ պատմական, վիպական, բանահյուսական, լեզվական, ընկալման, քաղաքական, գրական-գեղարվեստական, ազգագրական, վարչական, արքայական (հայկական, ռուսական, պարսկական) և այլ մեկնությունների, արցախագիտական մտքի պատմության բացահայտմանը և վերահաման:

Այս տեսանկյունից ուսումնասիրվող նյութը ձեռք է բերում արդիական և գիտական նկատարումներ՝ կատարված մեկնաբանական (հերմենևտիկ) և արժեքաբանական (արքայագիտական) քննումների գոգոգրումով...

Հայ գրականության պատմության մեջ՝ այնպիսի ժամանակաշրջաններում, արժանագրվել են բանավիճային սուր բնույթ կրող գրական փաստեր, երևույթներ, որոնք գրադեգրել են ժամանակաշրջանի գրական շրջանակների՝ գրողների, գրաքննադատների, հասկազուս՝ հայ պարբերական մամուլի ուշադրությունը, որոնք իրենց էջերում զետեղել են ներկողմ արժանաչանքներ, սակայն՝ երբեմնակի էլ, բանավիճող կողմերից մեկի ճնշող ազդեցությամբ լծգրվել են միու կողմը ներկայագիտող բոլոր ծայրերն արտահայտող աղբյուրներ: Նման դեպքերում հարվածն ընդունող կողմերը հաճախ իրենք են հանդես եկել իրենց պաշտպանությամբ: Այս դեպքերում ևս ոչ միշտ է, որ նպատակը դրական արդյունք է ունեցել:

Մեր անդրադարձները մեկնողական և արժեքաբանական բնույթ ունեն XIX դ. երկրորդ կեսի հայ պարբերական մամուլի, գրական շրջանակների ու նրանց քննական միտումների, նախադրությունների, գրողական ուղղվածության ու, այսպես ասած, խմբագրությունների, արժեքական բանավիճումների, նպատակային ու միտումնավոր գրաքննադատության, ազնիվ ու, միտմանակ, խարդախող բնույթի և նրա դրսևորումների վերաբերյալ, իսկ դրանք, արժեքություններ՝ դիտողական, ապա՝ կատարի հարձակվողական բնույթ էին կրում...

Նման դիտարկումների մեկնության գնալով, փորձենք արժեքավորման դնել խնդրող առարկա բաղադրողը՝ քննելով Ասորես Բեկնագարյանի հեղինակությամբ «Գաղտնիք Ղարաբաղի» պատմական ուսումնասիրությունը և նրա շուրջ ստեղծված անհանգիստ մթնոլորտը, գրական այսպես ասած՝ ահաբեկությունը:

1886թ. Ս. Պետերբուրգում Առաքել աղա Մատուրյանի մեկնատությամբ, Մակաչ փարդապետ Բարխուդարյանի թարգմանությամբ հրատարակվել է Ասորես Բեկնագարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» աշխատությունը:

Թարգմանիչը գրքին կգում է հակիրճ բացատրություն՝ «Յառաջաբանություն թարգմանիչ» վերնագրով, որում որոշակի տեղեկություններ է հատորում գրքի հեղինակի ինքնության, նրա նպատակի, ծրագրի ու համառոտ բովանդակության նւ այլ հարցերի շուրջ՝ ավելացնում հետևյալը։

Մ. Բարխուդարյանը Շաշիում էր ապրում, երբ 1881թ. մայիսի 5-ին յուր բնակարանն է մտնում մի ավելադր ծնունդի, որը, չնայած պատկանելի տարիքին՝ ձեռք էր և գեղեցիկ։

Վերջինս թևատակից հանում է փայտաթված մի ծրար ու մեկնելով վարդապետին՝ ասում. «Ես յսնցի որ դուր իմ համագիտացին էք և հետազոտում էք ծնունդներից քաղել Ղարաբաղը՝ անցնել պատմությունը, այս պատճառաւ ես եւրոպայից անելով եկի ձեզ մօտ։ Համարեմ՝ թե մի դարին մօտենում է որ ես այս «Գաղտնիք Ղարաբաղի» ձեռագիրը մատուցի նման գգույթներով պահպանել իմ։ Սորա մէջ թե՛ շատ փտանգաւոր գաղտնիքներ կան և թե՛ Ղարաբաղի պատմութեան վերաբերեալ անգին գանձեր։ Բայց այսուհետև էլ կմանքիցս չեմ վախում, որովհետև մոտե մօտենում է և սորա վերջին գլուխը գրել, պրծել եմ։ Համագիտացիութեան սերն իմ թաշնով ձեզ մօտ բերաւ. քանզի քաղցր է հայրենիքն, քաղցրագո՛յն ծննդեան տունին և սիրելի համագիտակիցն»¹։

Այսուհետև ծնունդին մի վերջին խնդրանք է անում թարգմանչին. «Հիմի ձեզ եմ նուիրում «Գաղտնիք Ղարաբաղի»-ն փառահօրէն։ Դուք նախ դուրս լնգուն աշխարհաբար փոխնցեք և ապա հրատարակել տուէք, որպէս զի դիւրութեանի լինին դուրս իմաստներն հասարակութեան։ Հիմի գրականական լնգուն աշխարհաբարն է և ոչ թե գրութարն, որ շատերին անհասկանալի է»²։

«Նուաքորիքի այս պատմությունը ունի մեկ այլ՝ հեղինակային միջամտություն»՝ Արքեմ Բեկնազարյանի կտակը. «Որկու տարի էլ համբերեցեք և ապա հրատարակել տուէք, եթէ արժան կը համարէք հրատարակութեան և եթէ կը յարգէք իմ կտակը»³։

Ծնրունին չլսեց նույնիսկ Բարխուդարյանի թախանձանքները՝ որևէ պատիվ ընդունելու մտայն. «Իմ վարձատրությունը այն է, որ տպագրել տար այդ ձեռագիրը. իմ յարգանքը և պատիվը այն է որ ճշտի կատարէք իմ կտակը և պատուէրը. իմ ամուսնը և ազգանունը կիմանաք ձեռագրից»⁴։

Առաջաբանում Մ. Բարխուդարյանը նշում է, թե գիրքը (ինչպես հատուկ է մեր որոշ պատմիչ-մատենագիրների ներկայություններին) չունի ոչ առաջաբան, ոչ գլուխները բացահայտող բովանդակային վերնագրեր։

«Գաղտնիք Ղարաբաղի»-ի նյութն ամփոփված է երկու հատորում։ Թարգմանիչը աղբյուրազիտական տեսակետից ավելի քարծր է գնահատում երկրորդ հատորը, որում «ժամանակագրական կրթյալ, գեղեցիկ դասադրուած են թե՛ պատմական անցքերն և թե՛ գանազան մտքդկներինց գրուած բոլոր նամակներն։ Իսկ առաջին հատորում ընդհակառակն է տեսնուում»⁵։

Գրքի ժամանակագրությունը փաստված է 1795 թվականից սկսած։ Մակայն հեղինակը հետադարձ հայացք է կատարել՝ պատմական փաստերի մեկնությունը հասցնելով մինչև Առանշահիկների առաջին թագավորական տունը։

Յով հայտնելով առաջին հատորում բացակայող ժամանակագրության ոչ պատշաճ ձևի առթիվ՝ Բարխուդարյանը հարկ է համարել յուր կողմից որևէ միջամտություն չանել այդ հարցում և պահպանել նյութը նույնությամբ, որն արժեքավոր դիւրեռոշում է։

Թարգմանչի աված տեղեկության համաձայն՝ գրքի առաջին հատորի նյութը շարադրել է Ապրեմ Բեկնազարյանը հոր՝ Աբրահամ Բեկնազարյանի թելադրությամբ, իսկ երկրորդ հատորը կայացել է վերջինիս կարգադրությամբ ու հոր և որդու միասնական խորհրդակցական եղբայնագումներով։

Աբրահամ Բեկնազարյանին Մակար Բարխուդարյանը համարում է «երեւելի պատմագետ» (որը ավերից հանել է Րաֆֆին), որի շնորհները նրանցել են թե՛ վարած խոսակցություններից և թե՛ արած խորհրդածություններից, հատկապես՝ նրա շարադրել է Աղվանից աշխարհի ինքնակալների, իշխողների դասավորությունը։ Բարխուդարյանը դրվատում է Աբրահամ Բեկնազարյանին, նրան անվանում է «հմուտ պատմաբան», որը վկայակոչելով Աղվանից պատմությունը և նրան վերաբերող այլ ձեռագիր աղբյուրներ, ցույց է տալիս նրա հետաքրքիր պատմությունը յուր կառավարող օղակներով, թագավորական, իշխանական-նախարարական և ապա՝ մեղիքական անցնելով. ըստ ծննդի կորից օրդի... որը նույնպես անարժեք է համարում Րաֆֆին՝ նկատի ունենալով Բեկնազարյանի նյութի ներկայացրած ձևը։

Թարգմանիչը գավալի է համարում այն փաստը, որ, գավթը, ոչ թուր իշխանական-միջրական տների մասին է տեղեկություններ ներկայացրել «Գաղտնիք Ղարաբաղի»-ի հեղինակը:

Միաժամանակ, թարգմանիչը գիրքը ներկայացնում է որպես ամենաջինջ հայելի, որը «պատկերացնում է ընթերցողաց աչաց առջև այն ամեն գաղտնի յարաբերությունները և թաղարքական ձգտումները, զորս ունեցած են Ղարաբաղի հայ հարազատ-մելիքներն միմեանց հետ, հայ հարազատ կաթողիկոսներն և մելիքներն Ռուսաց հետ, Ռուսներն Վսլոց հետ, ճրջ-խաներն ճրջ-մելիքների հետ և սորա նոցա հետ. պարսից շահերն և շահ-ժառանգն Անգրկովկասի թուրք խաների հետ և Հիսիսային Տաղատանի հոգևոր և մարմնատուր գլուխների հետ և վերջիններս առաջնոց հետ»⁶:

Նա անհերքելի է համարում «Գաղտնիք»-ում ներկայացրած պատմական փաստերը հայ-ռուսական, հայ-պարսկական, հայ-թուրքական առնչությունների շուրջ, այդ ամենից առաջացած ժողովրդի վերաբերմունքը առ ռուսական ինքնակալություն և ռուսական քաղաքականություն:

Դրվատում է գրքում ներկայացրած հայ մելիքների քաջագործությունները Ղարաբաղի խաների Փանահի, Իբրահիմի և Մեհտի Ղուլիի դեմ վարած կռիվներում՝ ընդգծելով նրանց դերը, ապա՝ 1826-28թթ. ռուս-պարսկական և Հյուսիսային Դաղստանում տեղի ունեցած արյունալի կռիվներում, բախումներում, պատերազմներում:

խոսելով հեղինակի մասնագիտական հմտության շուրջ՝ ասում է. «Հեղինակին մի ամենագովելի յատկության այն է՝ որ թուր նամակների և շահական երովաբանականների առնձնները նյութաբան, ժամանակագրական կարգաւ, գետնողած է «Գաղտնիք Ղարաբաղի» մէջ իբրև անհերքելի և շուրջիկ փաստեր»:

Ա. Բեկնազարյանի ոճը թարգմանիչը համեմատում է Եղիշի ոճի հետ և վատ գրաբար լեզու չէր անվանում մելիքների նամակագրության լեզուն, իսկ սովորական անձանց և մանցած մելիքների նամակների լեզուն համեմատում է Ղարաբաղի գեղջկական բարբառի հետ, և որը հաճախ, ըստ թարգմանչի՝ բազմազ անհասկանալի են: Այդ է պատճառը, որ ուսումնասիրության դասը աշխատեց «հեղինակը հորդորանք և իրավունք է վերապահել յուր հայրենակցի հանդեպ աշխատության լեզուն աշխարհաբարի փոխելու...», որպեսզի ընդհանրության կողմից հասկանալի լինի: Գրաբարը, հարկավ, թե՛ միմիայն եկեղեցու մենաշնորհին էր փաստված և թե՛ իստուրկ մասնագետների քննության ավելի գերադասելի առանցք համարված՝ սկզբնաղբյուր կոչվելու իմաստով...», բայց որն այժմ էլ, անգամ ուսանողությունը, նաև գիտությանը զբաղվող մասնագետները դյուրությամբ չեն ընկալում, չեն հասկանում մարտի:

Այդպիսի, այդ ամենը տեսանելի է գրքում և ճիշտ է դիտված ու գնահատված թարգմանչի կողմից:

Մ. Բարխուդարյանը ընդգծում է. նաև յուր այն նպատակը, ըստ որի՝ ցանկանում էր գիրքն առանց թարգմանության տպել, բայց հարկադրված էր զուգել այն, քանզի գրքում անհասկանալի բառերի, դարձվածների ծանոթագրական ցանկը ավելին կլիներ, քան՝ թու՛ն նյութը, ուստի թողնում է յուր միտքը. «Ով կարդացած է «Արագը տարին կտարի» գիրքը՝ նա լիովին կը համոզուի որ Ղարաբաղի գեղջկական բարբառով և ոճով գրուածներն անմարսելի կերպովութն են ոչ միայն արտաքին Ղարաբաղի հայ Խտաբակութեան համար, այլ և նոյն իսկ գիտնոց»⁷:

Ուսումնասիրողը ուշադրություն է դարձնում նաև հետաքրքրության ներկայացնող պարսկերեն և թուրքերեն նամակներին ու նրանց ունեցած ոճին, որոնք ինքը՝ հեղինակին է փորձել թարգմանել և փորքիշատել հայատառ դարձնել, բայց որոնք, ըստ հեղինակի, դրսևորել են «թերաւան և պարսկական ոճի յատուկ ճապաղ և տաղտուկ ձևերն»⁸:

Բարձր գնահատելով պատմական նման ուսումնասիրության դերը՝ Մ. Բարխուդարյանը հակված է այն ճիշտ մտքին, որ նա «կարող է մեծ լույս սփռել ոչ միայն Ղարաբաղի պատմական միութեան վերայ, այլ և Ռուսաց Անդրկովկասի պատմական միութեանց, որը գաղտնի կատարուած լինելով՝ ցարդ մնացած են անյայտութեան մէջ»⁹:

Թարգմանիչը միաժամանակ քննության է դնում աշխատության ժանրային բնույթը՝ կասկածանք հայտնելով, թե՛ հմուտ պատմաբանները «Գաղտնիք» պատմությունն թե՛՞ զատմական վեպ, թե՛՞ պատմական վեպ կհամարեն, այն «լույս տնայնելու արժանի» էր թե՛՞ անպոճան. պատմութիւն է թե՛՞ պատմական վեպ, ընդհի՞ր գրքը է թե՛՞ հոռի.՝ այդ վճռները մենք թողնում ենք հմուտ պատմաբանների անաչառ քննադատութեան և որոշման»¹⁰:

Մ. Բարխուդարյանը խոսում է նաև մեկ այլ կարևոր, տեսական թարգմանական արվեստին՝ վերաբերող արժեքի շուրջ, այն է՝ «Մենք մեր կողմից առանց մի բառ՝ անգամ առնագնելու և

պակասեցնելու և առանց նորա ոգին և իմաստները այլայլելու հաւատարմաբար թարգմանեցինք»¹¹:

Թարգմանությանը գուգահեմ՝ նա պատմությանը կցել է ծանոթագրություններ:

Յուր առաջաբանի մեջ, սակայն, թարգմանիչը նշում է, թե 1884թ. օգոստոսի 30-ին «Մահտեսի Բալա Ջաքարեանցի տանից Դալիթ բեկ Գրիգորեանցի տուն վախադրուկով ժամանակ՝ երեկոյան մութին, բնօնակիրների անգգոռութիւնից ծրարից ընկնում են ձեռագիրն և հինգ տալնալ գիրք, որք էին մի փոքր Սաղմոս, մի «Հացի խնդիր», մի «Կշուածաղիկ», Ա հատոր ընդհանուր պատմութեան և մի «Դիցագնական աշխարհ»»¹²:

Փնտրտութները արդյունք չեն տալիս:

Այս տխուր կորուստը թարգմանչին ստիպում է փոխել յուր գրած՝ ուսումնասիրությանը կցվելիք առաջաբանը:

Աշխատության մեջ բազմաբնույթ պատմական փաստաթղթեր, մեկնություններ կան, որոնք շրջանցել ու չգնահատել, մերժել՝ չի կարելի: Պատմական, գրական և այլ տիպի արժեքների վերհանումը և գնահատումը այժմ էլ գիտական և անհետաձգելի խնդիր է հայագիտության կողմից, որին նպաստակաուղղված է սույն աշխատանքը:

Резюме

История армянской литературы и периодической печати свидетельствует о явлениях, носящих спорный характер, привлечших внимание определенных литературных, критических и публицистических кругов.

В 1886г. в Санкт-Петербурге в переводе (с гравара на современный армянский язык) Бархударяна Макара при поддержке мецената Аракела –ага Цатуряна было издано историческое исследование Бекназаряна Аюреса “Тайна Карабаха”.

Вокруг этой книги в периодической печати вышли отрицательные и положительные отзывы, оценки, рецензии, а также были опубликованы исследования (Раффи “Тайна Карабаха”, Лео “Роман или история?”). В конечном итоге это исследование целиком было обесценено и отвергнуто.

В ходе подробного анализа мы пришли к выводу, что исследование “Тайна Карабаха” содержит разносторонние исторические документы, объяснения страниц борьбы армянского народа Арцаха - объяснения, связанные с русско-персидским нашествием в течение XVIIIв. и в начале IX в., с русско-армянскими-арцахскими интересными отношениями, а также с историческими повествовательными, фольклорными, языковыми, дипломатическими, политическими, художественно-литературными, этнографическими, управленческими, архивными и другими толкованиями, с раскрытием и выявлением истории научной мысли Арцаха.

С этой точки зрения исследуемый материал приобретает современное и научное звучание. Он выполнен в русле аналитического (герменевтического) и оценочного (аксиологического) подходов.

Ծանոթագրություններ

1. Բեկնագարյան Ա., Գաղտնիք Ղարաբաղի, Ս. Պետերբուրգ, 1886, էջ Ե-Զ:
2. Նույն տեղում, էջ Զ:
3. Նույն տեղում, էջ Զ:
4. Նույն տեղում, էջ Զ:
5. Նույն տեղում, էջ Է:
6. Նույն տեղում, էջ Ը:
7. Նույն տեղում, էջ Թ:
8. Նույն տեղում, էջ Թ:
9. Նույն տեղում, էջ Ժ:
10. Նույն տեղում, էջ Ժ:
11. Նույն տեղում, էջ Ժ:
12. Նույն տեղում, էջ Ժ:
13. Նույն տեղում, էջ Ժ:

ԱրՊՏ, գրականության և ժուռնալիստիկայի ամբիոն